

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության նավթի եւ նավթամթերքների ընդհանուր շուկաների կառավարման, կազմակերպման, գործունեության եւ զարգացման կարգի մասին**

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ՝ «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 6-ի համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի, «Միասնական մաքսային տարածքի ստեղծման եւ Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի, «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի եւ «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի վրա,

հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական համայնքի անդամ պետությունների ընդհանուր էներգետիկ շուկայի ձեւավորման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի հայեցակարգի դրույթները,

գիտակցելով Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկայի ստեղծման անհրաժեշտությունը,

Կողմ հանդիսացող պետությունների վառելիքաէներգետիկ համալիրների ներուժի արդյունավետ օգտագործման, ինչպես նաեւ ազգային տնտեսություններին նավթով եւ նավթամթերքով ապահովելու նպատակներով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

### **Հոդված 1**

Սույն Համաձայնագրի նպատակներն են այն հիմնական սկզբունքների եւ միջոցառումների

սահմանումը, որոնք ուղղված են Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների ձեւավորմանը, ինչպես նաեւ այդ շուկաներում մրցակցության զարգացմանը:

Սույն Համաձայնագրում Միասնական տնտեսական տարածքի նավթի եւ նավթամթերքների ընդհանուր շուկա ասելով ենթադրվում է Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում, (այսուհետ՝ Մաքսային միություն), Մաքսային միության իրավապայմանագրային բազայով սահմանվող՝ Միասնական տնտեսական տարածքի տնտեսվարող սուբյեկտների առետրատնտեսական հարաբերությունների ամբողջությունը Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքներում նավթի եւ նավթամթերքի արդյունահանման, փոխադրման, մատակարարման, վերամշակման եւ իրացման ոլորտում, որոնք անհրաժեշտ են Միասնական տնտեսական տարածքում մասնակից պետությունների կարիքները բավարարելու համար:

## **Հոդված 2**

Միասնական տնտեսական տարածքում նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաներ ձեւավորելիս Կողմերը առաջնորդվում են հետեւյալ հիմնական սկզբունքներով՝

- 1) փոխադարձ առետրում քանակական սահմանափակումներ եւ արտահանման մաքսատուրքեր, (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ գանձումներ) չկիրառելը: Մաքսային միության միասնական մաքսային տարածքի սահմաններից նավթի եւ նավթամթերքի արտահանման մաքսատուրքերի վճարման կարգը սահմանվում է Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների առանձին, այդ թվում՝ երկկողմանի համաձայնագրերով,
- 2) Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի կարիքների առաջնահերթ բավարարում,
- 3) Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի մասով նորմերի եւ չափանիշների միասնականացում,
- 4) բնապահպանական անվտանգության ապահովում,
- 5) Միասնական տնտեսական տարածքի նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների տեղեկատվության ապահովման համակարգերի ձեւավորում:

### **Հոդված 3**

1. Միասնական տնտեսական տարածքի նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների ձեւավորման ուղղությամբ Կողմերն իրականացնում են հետեւյալ համալիր միջոցառումները՝
  - 1) մաքսային տեղեկատվության հիման վրա մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծումը, որը ներառում է բոլոր տեսակի փոխադրամիջոցներով նավթի եւ նավթամթերքների մատակարարման, արտահանման ու ներմուծման մասին տվյալներ,
  - 2) մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը սույն Համաձայնագրի դրույթների խախտումը կանխարգելող հսկողության մեխանիզմների ստեղծումը,
  - 3) մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ը Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի նորմերի եւ չափանիշների միասնականացում,
2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջոցառումները իրականացվում են Կողմերի կամ նրանց լիազոր մարմինների կողմից համապատասխան համաձայնագրերի շրջանակներում մեթոդաբանություն կամ կանոններ պարունակող փաստաթղթեր ստորագրելու միջոցով:

### **Հոդված 4**

Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների միջեւ կնքված համաձայնագրերի համաձայն՝ Կողմերը, իրենց ունեցած տեխնիկական հնարավորությունների սահմաններում, ապահովում են հետեւյալ պայմանները՝

- 1) Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների տարածքներում փոխադրման գործող համակարգով արդյունահանված նավթի եւ դրանից արտադրված նավթամթերքի երկարաժամկետ փոխադրումը իրականացնելու երաշխավորված հնարավորություն, այդ թվում՝ մայրուղային նավթամուղների եւ նավթամթերքի խողովակաշարերի համակարգերով դրանց փոխադրման հնարավորությունը,
- 2) Կողմ հանդիսացող պետությունների տարածքներում գրանցված տնտեսվարող սուբյեկտների համար Միասնական տնտեսական տարածքի յուրաքանչյուր մասնակից պետության տարածքում տեղակայված նավթի եւ նավթամթերքի փոխադրման համակարգի հասանելիություն՝ նույն պայմաններով, ինչով, որ դրանք հասանելի են այն Կողմի տնտեսվարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի եւ

(կամ) նավթամթերքի փոխադրումը:

### **Հոդված 5**

Նավթամուղների եւ նավթամթերքի խողովակաշարերի համակարգով նավթի եւ նավթամթերքի փոխադրման սակագները սահմանվում են Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության ազգային մարմինների կողմից եւ կարող են տարբերվել՝ կախված այն հանգամանքից, թե փոխադրումը իրականացվում է արտահանման, թե ներքին սպառման համար: Կողմ հանդիսացող պետությունների տնտեսվարող սուբյեկտների համար նավթի եւ նավթամթերքի փոխադրման սակագները սահմանվում են միեւնույն մակարդակի վրա, ինչը հավասար է այն սակագներին, որոնք սահմանվել են այն Կողմ հանդիսացող պետության տնտեսվարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի եւ նավթամթերքի փոխադրումը:

### **Հոդված 6**

Կողմերի իրավասու մարմինները, մինչեւ յուրաքանչյուր ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը, համաձայնեցնում են Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի հաջորդ օրացուցային տարվա արդյունահանման, սպառման, մատակարարման, ներմուծման ու արտահանման (արտադրության) ինդիկատիվ հաշվեկշիռները:

Կողմերի իրավասու մարմինները համաձայնեցնում են Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի արդյունահանման, արտադրության, սպառման, փոխադրման, մատակարարման, ներմուծման եւ արտահանման երկարաժամկետ ինդիկատիվ հաշվեկշիռը, որում, անհրաժեշտության դեպքում, կարող են ամեն տարի ճշգրտումներ կատարվել՝ հաշվի առնելով Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի արդյունահանման, նավթամթերքի արտադրության եւ սպառման ոլորտում տեղի ունեցած փաստացի փոփոխությունները:

Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություններից մեկի տարածքում արդյունահանված նավթի փոխադրման ծավալներն ու ուղղությունները Միասնական տնտեսական տարածքի մեկ այլ մասնակից պետության տարածքով փոխադրվելիս ամեն տարի սահմանվում են Կողմերի իրավասու մարմինների միջեւ ստորագրված արձանագրություններով:

## **Հոդված 7**

Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների նավթի եւ նավթամթերքի ներքին շուկաների կարգավորումը իրականացվում է այդ պետությունների ազգային մարմինների կողմից: Կողմերը միջոցառումներ են իրականացնում նավթի եւ նավթամթերքի շուկաների ազատականացման ուղղությամբ՝ Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն:

## **Հոդված 8**

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի՝ միջազգային այլ պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց նրանք մասնակցում են՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածում նշված միջազգային պայմանագրերի:

«Մրցակցության միասնական սկզբունքների ու կանոնների մասին» Կողմերի համաձայնագիրը կիրառվում է բնական մենաշնորհների այն սուբյեկտների նկատմամբ, որոնք իրականացնում են նավթի եւ նավթամթերքի փոխադրում՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրով նախատեսված առանձնահատկությունները:

## **Հոդված 9**

Սույն Համաձայնագրի կատարման համակարգումը իրականացվում է հետեւյալ իրավասու մարմինների կողմից՝

բելառուսական կողմից՝ Նավթի եւ քիմիայի Բելառուսի պետական կոնցենդր եւ Բելառուսի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը,

ղազախական կողմից՝ Ղազախստանի Հանրապետության նավթի եւ գազի նախարարությունը,

ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության էներգետիկայի նախարարությունը:

Իրավասու մարմինների փոխարինման դեպքում՝ Կողմերի իրավասու մարմինները դիվանագիտական ուղիներով ծանուցում են միմյանց դրա մասին:

## **Հոդված 10**

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի կողմերից մեկի կողմից մյուս կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## **Հոդված 11**

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես որեւէ Կողմին պարտադրող՝ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող երրորդ պետությունների կամ այդպիսի երրորդ պետությունների տնտեսվարող սուբյեկտների, դրանց ապրանքների կամ ծառայությունների վրա տարածելու սույն Համաձայնագրից բխող առավելությունները եւ (կամ) կանոնները:

## **Հոդված 12**

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

## **Հոդված 13**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Ղազախստանի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ՝ «Նավթի եւ նավթամթերքի մատակարարումների ոլորտում համագործակցության մասին» 2010 թվականի համաձայնագրի, ինչպես նաեւ Բելառուսի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ՝ «Բելառուսի Հանրապետության տարածքից Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս նավթի եւ նավթամթերքի արտահանման

ժամանակ արտահանման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների) վճարման կարգը սահմանելու մասին» 2010 թվականի համաձայնագրի հետ միաժամանակ, եւ կիրառվում է Կողմ հանդիսացող պետությունների միջեւ հարաբերություններում՝ պայմանով, որ այդ պետությունների տարածքներում գործեն բոլոր այն համաձայնագրերը, որոնց ստորագրումը նախատեսված է ԵվրԱզԷսի Միջպետական խորհրդի, (Մաքսային միության բարձրագույն մարմին), պետությունների ղեկավարների մակարդակով 2009 թվականի դեկտեմբերի 19–ի թիվ 35 որոշմամբ հաստատված՝ «Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման վերաբերյալ» Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության գործողությունների ծրագրով, ինչպես նաեւ Ղազախստանի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ՝ «Նավթի եւ նավթամթերքի մատակարարումների ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի եւ Բելառուսի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ «Բելառուսի Հանրապետության տարածքից Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս նավթի եւ նավթամթերքի արտահանման ժամանակ արտահանման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների) վճարման կարգը սահմանելու մասին» 2010 թվականի համաձայնագրի հետ միաժամանակ. (սույն հոդվածում նշված երկկողմանի համաձայնագրերի անվանումները, կարող են ճշգրտվել կողմերի բանակցությունների արդյունքներով):

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9–ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահն է եւ յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի	Ղազախստանի	Ռուսաստանի
Հանրապետության	Հանրապետության	Դաշնության
Կառավարության կողմից	Կառավարության կողմից	Կառավարության կողմից